

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ  
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

### Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Լիլիթ Գալստյանի, Արա Նռանյանի, Վահան Հովհաննիսյանի, Անահիտ Բախշյանի, Արմեն Ռուստամյանի և Արծվիկ Մինասյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը համաձայն է համազգային և համապետական նշանակության մշակութային ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը պետականորեն գնահատելու համար «Ազգային» կարգավիճակի շնորհմանը: Մինևույն ժամանակ, սուբյեկտիվ և հարաբերական համարելով «անժամանցելի արժեքներով հարստացում» հասկացությունը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված օրենքի նախագծում «Ազգային» և «Ակադեմիական» կարգավիճակի բնորոշումները բովանդակային առումով էապես չեն տարբերվում միմյանցից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը հարկ չի համարում «Ակադեմիական» կարգավիճակի սահմանումը: Այդ կապակցությամբ առաջարկում ենք օրենքի նախագիծը խմբագրել՝

1) հանել «Ակադեմիական» կարգավիճակին առնչվող բառերն ու դրույթները.

2) հստակեցնել միջնորդություն ներկայացնող, կարգերը հաստատող, կարգավիճակ շնորհող մարմինները՝ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածով սպառիչ սահմանված են Հայաստանի Հանրապետության Նախագահի լիազորությունները և օրենքով այլ լիազորություններ չեն կարող տրվել.

3) համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված օրենսդրական տեխնիկայի պահանջներին:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության մշակույթի Հասմիկ Պողոսյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին**

**Հոդված 1.** «Հայաստանի Հանրապետության մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-465-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածում ավելացնել «11)» եւ «12)» մասեր՝ հետեւյալ բովանդակությամբ.

*«11) ներկայացնում է մշակութային ոչ առևտրային առանձին կազմակերպություններին՝ թատերական, երաժշտական, պարարվեստի, թանգարանային, գրադարանային եւ արխիվային կազմակերպություններ, «Ազգային» կարգավիճակ շնորհելու վերաբերյալ միջնորդություն»:*

*«12) սահմանում է մշակութային ոչ առևտրային կազմակերպություններին՝ թատերական, երաժշտական եւ պարարվեստի կազմակերպություններ, «Ակադեմիական» կարգավիճակ շնորհելու կարգն ու պայմանները»:*

**Հոդված 2.** Օրենքի Գլուխ 7-ի վերնագիրը «տեսակները» բառից հետո լրացնել «եւ կարգավիճակը» բառով:

**Հոդված 3.** Օրենքի 26-րդ հոդվածից հետո ավելացնել «Հոդված 26.1» հետեւյալ բովանդակությամբ.

*«Հոդված 26.1. Մշակութային ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակը»*

1. Մշակութային առանձին կազմակերպությունների, որոնք համազգային եւ համապետական նշանակության բացառիկ գործունեություն են իրականացնում, կարող է շնորհվել «Ազգային» կարգավիճակ:

«Ազգային» կարգավիճակը շնորհում է ՀՀ նախագահը:

2. Մշակութային ոչ առևտրային կազմակերպությունների՝ թատերական, երաժշտական եւ պարարվեստի կազմակերպություններ, որոնց գործունեությունը անժամանցելի արժեքներով հարստացնում եւ զարգացնում է ազգային մշակութային ժառանգությունն ու նպաստում նրա հանրահռչակմանը, կարող է շնորհվել «Ակադեմիական» կարգավիճակ:

3. «Ազգային» եւ «Ակադեմիական» կարգավիճակներ շնորհելու կարգն ու պայմանները հաստատվում է ՀՀ կառավարության կողմից:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՕՐԻՆԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 2002թ. նոյեմբերի 20-ին: Այն կարգավորում է ՀՀ-ում պետական մշակութային քաղաքականության կազմակերպման սկզբունքները, մշակութային գործունեության հետ կապված իրավահարաբերությունները, սահմանում է պետական մարմինների իրավասությունները մշակութային ոլորտում, ինչպես նաև մշակութային կազմակերպությունների գործունեության տեսակները:

ՀՀ մշակութային դաշտում գործում են մի շարք մշակութային կազմակերպություններ, որոնք իրենց պաշտոնական անվան մեջ ունեն «ազգային» եւ «ակադեմիական» կարգավիճակը (Հայաստանի ազգային պատկերասրահ, Հայաստանի ազգային գրադարան, Հայաստանի ազգային գրապալատ, Հայաստանի ազգային կինոկենտրոն, Հայաստանի Խնկո Ապրո անվան ազգային մանկական գրադարան, Գ. Մունդուկյանի անվ. ազգային ակադեմիական թատրոն, Ա. Սպենդիարյանի անվ. օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն, Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբ), սակայն այս երկու հասկացությունները ՀՀ մշակութային օրենսդրությամբ չունեն իրենց իրավական ամրագրումը կամ սահմանումը:

Օրենսդրական նախաձեռնությունը ՀՀ «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենքում ամրագրելով «ազգային» եւ «ակադեմիական» կարգավիճակները, կլրացնի օրենսդրական բացը, ինչպես նաև կխթանի վերոհիշյալ կարգավիճակների շնորհման չափանիշների եւ չափորոշիչների սահմանմանը, կնպաստի տվյալ կարգավիճակն ունեցող մշակութային կազմակերպությունների նկատմամբ անհրաժեշտ պետական աջակցություն եւ վերաբերմունք դրսևորելուն: